



Սեպտեմբեր 2022

# Ուղեցուցիչ հանրային վճարի վերաբերյալ

---

ԹԱՐՄԱՑՈՒՄ. Դաշնային կառավարությունը հրապարակեց հանրային վճարի վերջնական կանոնը՝ սահմանափակելով դրա կիրառումը և վերացնելով հանրային նպաստների խոչընդոտները ներգաղթյալների մեծ մասի համար: Վերջնական կանոնն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 23-ից:



Այս ուղեցույցը տրամադրում է ընթացիկ տեղեկատվություն “հանրային վճարի” որոշման դաշնային փոփոխությունների և հանրային նպաստների օգտագործման վերաբերյալ: Վերջնական կանոնը սահմանափակում է ներգաղթի դաշնային պաշտոնյաների կարողությունը՝ հաշվի առնելու հանրային նպաստներ ստանալը, երբ թույլ են տալիս անհատներին մուտք գործել Միացյալ Նահանգներ կամ դիմել օրինական մշտական բնակության կարգավիճակ ստանալու համար (հայտնի է նաև որպես green card/գրին քարտ ունեցողներ):

Դաշնային կառավարությունը վերջնական կանոնը հրապարակեց 2022 թվականի սեպտեմբերի 9-ին: **Վերջնական կանոնը ուժի մեջ կմտնում 2022 թվականի դեկտեմբերի 23-ից:** Խնդրում ենք այցելել հետևյալ կայքէջը՝ [US Citizenship & Immigration Services \(USCIS\)](https://uscis.gov) թարմացված տեղեկատվության համար: Այս վերջնական կանոնի և ընդհանուր առմամբ հանրային վճարի վերաբերյալ հարցերի համար անհատներին օգնելու իրավասություն ունեցող շահույթ չհետապնդող կազմակերպությունների ցանկը հասանելի է հետևյալ կայքէջում՝ [California Department of Social Services website](https://www.cdss.ca.gov):

## **ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐՆ ԱՅԺՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՆՆԴԻ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՏ ԱՅԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՆՊԱՍՆԵՐԻՑ՝ ԶՎԱԽԵՆԱԼՈՎ ՆԵՐԳԱՂԹԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ:**

### **1. Հանրային նպաստների մեծ մասը բացառված է քննարկումից:**

Հանրային վճարի վերջնական կանոնը միայն թույլ է տալիս դաշնային կառավարությանը դիտարկել հետևյալ հանրային նպաստների նախնական կամ ընթացիկ ստացումը՝ իր հանրային վճարների վերանայման ժամանակ.

1. Լրացուցիչ ապահովության եկամուտ (SSI);
2. Կանխիկ օգնության եկամուտը պահապանելու համար՝ Կարիքավոր Ընտանիքների ժամանակավոր Աջակցության շրջանակներում (TANF, որը կոչվում է CalWORKS Կալիֆորնիայում);
3. Նահանգային, ցեղային, տարածքային կամ տեղական դրամական նպաստների ծրագրեր՝ եկամտի պահպանման համար (հաճախ կոչվում են “Ընդհանուր Աջակցություն”); կամ
4. Պետական միջոցների հաշվին երկարատև ստացիոնար խնամք (օրինակ՝ որակավորված ծերանոցում):

### **2. Ներգաղթյալների մեծամասնությունն ընդհանրապես կարք ԶՈՆԻ անհանգստանալու հանրային վճարի համար:**

Հանրային վճարը չի տարածվում բոլորի վրա: Մշտական օրինական բնակիչները (green card ունեցողները) և շատ այլ ներգաղթյալներ ազատված են պետական վճարից: Ազատված ներգաղթյալների խմբերը ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ փախստականներ, ապաստարան հայցողներ, հատուկ ներգաղթային վիզա ունեցողներ, ժամանակավոր պաշտպանված կարգավիճակ ստանալու համար դիմող կամ վերագրանցող անձինք, հատուկ ներգաղթյալ անչափահասներ, T և U ոչ ներգաղթյալներ (մարդկային թրաֆիկինգի գոհեր և որոշ այլ հանցագործություններ), ինքնակամ խնդրողներ՝ կանանց նկատմամբ բռնության մասին օրենքի համաձայն, ինչպես նաև որոշ կուբացի և հաիթի դիմողները: Ըստ վերջնական կանոնի՝ որոշ անհատներ, ովքեր իրավասու են փախստականների վերաբնակեցման դաշնային նպաստների համար, ներառյալ վերջերս աֆղան և ուկրաինացի պայմանական վաղաժամկետ ազատվածները, դեռևս ենթակա են հանրային վճարի, սակայն նրանց ստացած վերաբնակեցման նպաստները հաշվի չեն առնվի:



### 3. **Ընտանիքի անդամների կողմից օգտագործվող հանրային նպաստները հաշվի ՉԵՆ առնվում:**

Վերջին կանոնի համաձայն, երբ դաշնային կառավարությունը վերանայում է հանրային նպաստների օգտագործումը որպես իր հանրային վճարի որոշման մաս, այն միայն հաշվի կառնի այն արտոնությունները, որոնք ստացվել են կարգավիճակի ճշգրտման համար դիմողների կողմից՝ որպես ուղղակի դիմող կամ գրանցված նպաստ ստացող: Սա նշանակում է, որ ձեր ընտանիքի անդամները, ովքեր մուտք են գործում հանրային ծրագրեր, չեն դիտարկվի որպես **ձեր** հանրային վճարի որոշման մաս: Օրինակ, դաշնային կառավարությունը **չի** հաշվի առնի ԱՄՆ քաղաքացի երեխայի կողմից ստացված դրամական օգնությունը, եթե ծնողը green card-ի դիմի ընտանիքի վրա հիմնված միջնորդության միջոցով:

### **ՀԱՍԿԱՆԱԼ “ՀԱՆՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ” ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Երկարատև դաշնային քաղաքականության համաձայն՝ դաշնային կառավարությունը կարող է մերժել ոչ քաղաքացու մուտքը Միացյալ Նահանգներ կամ օրինական մշտական բնակության (գրին քարտ) կարգավիճակի հարմարեցումը, եթե որոշվի, որ նա կարող է դառնալ “հանրային վճար” (սահմանվում է որպես որևէ մեկը, ով գոյատևման համար հիմնականում կախված է կառավարությունից)՝ հիմնված անհատի հանգամանքների ամբողջության վրա: Այս որոշումը ներառում է մի քանի գործոն՝ ի լրումն հանրային նպաստների ստացման, ինչպիսիք են եկամուտը, տարիքը, առողջությունը, ընտանեկան կարգավիճակը, կրթությունը և հմտությունները, ֆինանսական վիճակը, արժեքները և անհրաժեշտության դեպքում, օժանդակ փաստաթուղթ հովանավորից (կոչվում է՝ աջակցության վկայագիր):

Հանրային վճարի վերջնական կանոնը սահմանափակում է դիտարկվող հանրային նպաստների տեսակները՝ մեղմացնելով ցածր եկամուտ ունեցող ներգաղթյալների համար գրին քարտեր ձեռք բերելու արգելքները: DHS-ը պետք է հաշվի առնի այլ գործոններ, ինչպիսիք են կրթությունը, եկամուտը և աջակցության վկայագիրը կամ դաշնային կառավարության հետ կապ հաստատելը: Հետևաբար, ներգաղթյալի կողմից պետական միջոցների հաշվին երկարատև հիվանդանոցային խնամքի օգտագործումը կամ եկամուտը պահպանելու համար կանխիկ դրամական օգնությունը ինքնաբերաբար չի հանգեցնի որոշման, որ դիմողն ամենայն հավանականությամբ, կդառնա հանրային վճար:

### **Առողջապահությունը, սնունդը և շատ այլ հանրային նպաստներ ՉԵՆ դիտարկվում հանրային վճարի նպատակներով:**

Վերջնական կանոնը պարզաբանում է, որ հանրային նպաստների ծրագրերի մեծ մասի օգտագործումը Չի դիտարկվելու:

- CalFresh կամ SNAP
- Դպրոցական սնունդ
- Medi-Cal կամ Medicaid (բացառությամբ երկարատև ստացիոնար խնամքի դեպքերի (նաև հայտնի է որպես որակավորված ծերանոցային խնամք))
- Covered California-ի սուբսիդիաներ
- Medicare
- Պատվաստումներ կամ վարակիչ հիվանդությունների թեստավորում/բուժում, ինչպիսին է COVID-19-ը



- Տնային աջակցության ծառայությունների ծրագիր
- Դաշնային հանրային բնակարանների և Section 8-ի աջակցություն
- Կալիֆորնիայի կանանց, նորածինների և երեխաների WIC ծրագիր
- Աջակցություն աղետների դեպքում, համաճարակի օգնություն, կոմունալ օգնություն, երեխաների խնամքի օգնություն
- Մանկական հարկային վարկ (CTC) կամ վաստակած եկամտահարկի վարկ (EITC)

**Նոր քաղաքականությունը ՉԻ փոխում հանրային նպաստների ծրագրերի իրավասության կանոնները:**

Նոր քաղաքականությունը չի փոխում, թե արդյոք անհատները կարող են դիմել և ստանալ հանրային նպաստներ: Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչ հանրային նպաստների համար կարող եք իրավասու լինել, այցելեք [your local services agency](#) կամ [www.benefitscal.com](http://www.benefitscal.com)

**ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏԱՆԻՔ ՏԱՐԲԵՐ Է, ԴԻՄԵՔ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ:**

Կարևոր է, որ շահագրգիռ անհատները և ընտանիքները իմանան իրենց իրավունքները և ստանան ճշգրիտ տեղեկատվություն՝ հասկանալու, թե արդյոք կանոնն ազդում է իրենց վրա, թե ոչ: Եթե հարցեր ունեք, ներգաղթի կամ հանրային նպաստների փաստաթանկը կարող է ձեզ խորհուրդ տալ՝ հիմնվելով ձեր անհատական իրավիճակի կոնկրետ փաստերի վրա: Եթե դուք կամ ուրիշները կոնկրետ գործի վերաբերյալ հարցեր ունեք, մենք ձեզ խրախուսում ենք դիմել որակավորված մասնագետի՝ իրավաբանական խորհրդատվության համար:

**Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների ցանկը, որոնք իրավասու են անհատներին օգնություն ցուցաբերել, հասանելի է հետևյալ կայքէջում՝ [California Department of Social Services website](#):**



Get more information on the **Immigrant Guide website.**